

ՄԱՍԻՆ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԵԿՈՒԻ ՍՍԵՆ ԵՍԲԱԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԱՐԱՐԱՊԵՏ
ԴՐԻԴՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պոլիս եւ Գաւառներ 10 Ղրուշ
Ռուսաստան 4 Բուպի
Եւրոպա 10 Ճրանք

ՀԱՍՏԷ

Ղալաթիա, Իզմիրի Օղլու խան, քիւ 3-4

ՊԵՏՔԵՐՈՒ ԿԱՐԳԸ

«Պէտք է որ ուսմանց ամէն մէկը ուսանողներուն պատշաճ եղած կարգին յատկացնեն, անանկ որ աննահանջելի եղածները առաջին կարգն ունենան, հարկաւոր եղածները՝ երկրորդ, պիտանի եղածները՝ երրորդ, օգտակար եղածները՝ չորրորդ ու հաճոյական եղածներն ալ էն վերջի կարգը դասուին»

Այսպէս կը գրէր 1849ին Նիկողոս Զօրայեան, մեր ամենէն խոհուն և կատարելամիտ գրողը՝ մեր դաստիարակութեան գլխաւոր թերութեանց վրայ հրատարակած գրքոյի մէջ:

Քառասուն ու չորս տարիներ անցած են անկէ ի վեր, և ռակայն ոչինչ ուսած, ոչինչ մոռցած ենք մեր թերութեանց նկատմամբ:

Այլ և այլ ուսմանց մեզ համար ունեցած կարեւորութեան աստիճանը

առաջուան չափ սխալ ըմբռնուած է, կամ բնաւ խորհուած չէ: Նոյն յուրի դասաւորութիւնը որով հաճոյականն ու զարդականը առաջ անցեր էին անհրաժեշտէն ու օգտակարէն, այսօր ալ կը շարունակէ: Եւ տակաւին չա՛տ հեռու ենք ըլլալէ այն տնտեսագէտ, ժողովուրդը՝ զոր մեզ գլխաւոր նպատակ դնել կը պատուիրէր Աղաթօն:

Քիչ մը չի՛ նմանիր այս՝ այն վայրիներուն վարմունքին՝ որոնք իրենց մերկութիւնը չժածկած՝ մեծ խնամքներ կը տանին իրենց մարմինը tatouer ընելու ու մազերնուն այլանդակ ձեւեր տալու, և մարդավայել տնակ մը չհոգացած՝ ուլունք ու թիթեղի կտորուանքի խեղք կուտան:

Թերութիւնը միշտ նոյնն է: Զունենալ իրենց վիճակին գիտակցութիւնը, չըմբռնել կեանքի անհաւասար պէտքերուն աստիճանը, չհետեւիլ մէթոտի մը՝ կարգաւ, համեմատաբար, գոհացնելու համար զանոնք: Այ՛, ամէնը՝ պտուղ քաղաքակրթու-

թեան, կ'ենթադրէ կատարեալ գիտակցութեամբ գործել։

Բայց միթէ տակաւին մեր պատանիները դպրոցին մէջ և երբեմն դուռն ալ ոտանաւոր դրելու կամ գրագէտ ըլլալու տենչով չեն տոչորիր։ Միթէ տակաւին դանգաւաններ չեն չնչներ՝ օգտաբեր ուսմանց յաւելման կամ անոնց տրուած կարեւորութեան դէմ, այնպէս որ եթէ երկու զատ դասընթացքներ հաստատուէին, մէկը՝ դպրութեանց, և միւսը՝ գիտութեանց, առաջինը պիտի խուժէին, խռնուէին, մինչդեռ թափուր պիտի մնային երկրորդին դասարանները։

Միթէ մեր գրականութիւնը միշտ փոյթ չի ցուցներ մեծ բաժին հանելու, նախաթուր յատկացնելու հաճոյականին, զարդականին, քմածինին։

Գիտեմ թէ կայ տարիք մը — ոսկեծաղիկ պիտի ըսէին ոմանք — որուն մէջ բանաստեղծելու, երգելու բուռն տենչ մը կը գրաւէ մարդս. մեղադրելի չէ այդ։ Սխալը այն ատեն կ'սկսի երբ չղսպուիր այն, կամ սրտին մէկ ծածուկ խորշը չպահուիր վանդակուած՝ այդ թուշուրը որ երգել կ'ուզէ, և որ, աւագ, խիստ քիչ անգամ սոխակ մըն է։

Այս խտրութենէն շահողը պիտի ըլլայ նոյն իսկ այս գեղարուեստական ճիւղը գրականութեան՝ ճշմարիտ, անդիմադրելի կոշտներու միայն ասպարէզ դառնալով։

Ձեմ՝ անտեսներ անհաստական ձգտումներ, սրտի պէտքեր, բայց կը փափաքիմ որ անոնց տէրը գիտնայ անոնց սահմանն ու ստորագրաս կարեւորութիւնը՝ գէթ մեր արդր նիւթական վիճակին մէջ։

Մտաւոր, գեղարուեստական զարգացումը միշտ ու ամեն տեղ նիւթականին արագոտն հետեւորդն է եղած բայց ոչ երբեք յառաջընթացը։ Ար-

դարեւ անժխտելի է նաեւ հոս ալ փոխադարձ ազդեցութիւն, բայց երբ անգամ մը նիւթականը գէթ միջակ չափով մը բաւական հաստատ հիմերու վրայ դրուած ըլլայ։

Շատ անգամ առաջարկներ եղած են որ գիտութեանց և ճարտարագործութեանց բարձրագոյն տեսութիւնները փոխանակ եւրոպա ստացուելու, հոս աւանդուին մեր բարձրագոյն ուսումնարաններուն մէջ, և այս նպատակաւ կարող պատանիներ եւրոպա շրկուին մասնագիտութեան մը տիրանալու, որպէս զի յետոյ դառնան հոս աւանդելու զայն։ Տխուր փորձը ցուցուցած է սակայն թէ մեր նիւթական յետեալ վիճակ, սահմանափակ պէտքերը, չեն կրցած (և խիստ փոքր թիւի համար կրնան) ալ ժանաւոր վարձք ու ասպարէզ ընծայել բարձր մասնագէտներու, զորոնք այլուր զանազան պաշտօններ աւելի գոհ ընելով քաշած, առած են մենէ։

Ուրեմն թող չհամարուի թէ կ'ուզեմ նեղ, չոր օգտուպաշտութիւն մը քարոզել, այլ ներդաշակութիւն մը հաստատել մեր վիճակին ու մեր կըրթական ուղղութեան մէջ, և ըստ անձ ճշգրիտ բաժինն ու դասակարգութիւնն ընել օգտակարին ու զարդականին, որպէս զի ամէն կողմ եղած ճիգերէն ու զոհողութիւններէն քաղուած պըտուղը չըլլայ... պատրանք։

ԳԱՌՆԻԿ Յ. ՖՆՏԻԼԵԱՆ

ԾԱՆՈԹ ԴԵՄՔԵՐ

ԳԵՐ. ՕՐՄԱՆԵԱՆ

Մարմնական յաղթ վանգուած մը, դէպ ի ետեւ չըջած քիչ մը . հեւացող ու դժգոհ լանջք մը որուն վրայ վաղահաս աւելորումով ճերմկած՝ առիւծի գլուխ մը ու զուարթ դէմք մը կը խորխտան . սըրտաթունդ ու անոյշ ձայն մը որուն յայտնի անկեղծութեան շեշտը՝ շիտակ սրտիդ կ'երթայ ու կը տիրէ անոր. ձեռքի բռնուն շարժումներ որոնք սպառնալից պիտի թըւէին եթէ դադրէին շնորհալի ըլլալէ եւ որոնք՝ խօսակցութեան մէջ բանիւ բերանոյ չի զուրցուած մասերը ամբողջացնելու պաշտօնը կը կատարեն:

Այս է արտաքին երեւոյթը:

Հին ատենները ապարանքներուն բոլոր արուեստական շքեղութիւնը ներսն էր . հիմակուան ճարտարապետութիւնը՝ շէնքին դուրսի երեսին վրայ կը թափէ իր բոլոր ճիւղը, իր արուեստը, իր ճաշակը հոն ի տես կը դնէ ու փոյթ չընէր որ ներսի պատերը անշնորհ կամ անպաճոյճ երեւան. հո՛ս յանգած է քաղաքակրթութեան յարատեւ ձգտումը, ամեն ինչ դուրսը: Գեր. Օրմանեան՝ հին ժամանակի ապարանքներէն է. իր ներսը հմտութեան գանձեր կան լեցուած և հոն կառուցուած կահաւորուած ապարանք մը կայ սրտի ու մտքի ամեն ճոխութիւններով որոնք իր եկեղեցականի՝ համեստ՝ սքեմին տակ կը ծածկուին միշտ:

* * *

Հաւատք մը կայ՝ որ անգգալաբար կը տիրէ վրայ. կարծես թէ անուշադիր մէկ վայրկեանէջ օդուտ կը քաղէ ներս սպրդելու ու հոն հաստատուելու համար. աւելի կը սահի քան թէ յայտնի կերպով կը մտնէ:

Իրեն քարոզածը՝ հակառակն է ասոր. պայքարիկ ու բարձրախօսիկ բան մըն է որ իր դաւուստը կանխաւ կ'իմացնէ, իր սեպհական ոյժին կը յենու ու յաղթա-

կան մուտքով խղճմտանքներէն ներս կը մտնէ. անոր համար որ համոզումի արդիւնք է: Հաւատք. ո՞չ ապաքէն մարդկային իմաստասիրութիւնը ուրիշ եղրակացութեան մը չի գար և աստանդական մտքերու համար՝ որոնք անմատչելի բեւեռի մը վրայ ոտք կոխելու յոյսով կը մուրրին, նորէն ան է վերջին ու անքոյթ նաւահանգիստը:

Այս պատճառով է որ Գեր. Օրմանեան աղաչաւորի ու վէճէ խուսափողի ձեւեր չառնէր երբ Կրօնքի վրայ կը խօսի:

Ոչ Պատմութիւնը կը չփոթեցնէ զինքը և ոչ Գիտութիւնը. ընդհակառակը անոնցմէ է որ կը քաղէ իր փաստերը ու իր զէնքերը կ'առնէ. ամենէն նորահասար ապացոյցները անձանօթ չեն իրեն, ու բանակուի մէջը չի նմանիր այն եկեղեցականներուն որոնց բոլոր համոզումի միջոցները՝ վաղնջական ժամանակներէ մնացած փաստեր են որոնք նորերուն դէմ հանուելով՝ առջի վայրկեանէն կը փըշրուին:

* * *

Այն պարտասուն հոգիներուն մէջ որով մեծ մասամբ մեր եկեղեցականութիւնը կը ձեւանայ, Գեր. Օրմանեան կաղնիի մը ամբարձիկ ուղղութիւնը պահած է, անխախտ ու ամուր կենալով իր սրբազան կոչումին վրայ, առանց պարծենալու՝ շարունակելով հատուցանել իր պարտքը, պարզութեամբ ու համեստութեամբ. այնպէս՝ ինչպէս սրտաբերը պէտք է որ հատուցուին:

Այսպէս, սիրայօժար գացած է հոն ուր կոչած են զինքը Ազգն ու Եկեղեցին, Կաթինի լեռնադաշտէն մինչեւ Արմաշի մեռնաստանը, ճշմարիտ վարդապետ մը ըլլալով ո՛չ միայն այն սուրբ օծումով զոր Եկեղեցին կը շնորհէ, այլ այն աւելի սուրբ օծումով զոր անձնութիւնը կուտայ:

Իր համակերպիկ մարդու զուարթախոհութիւնը՝ կեանքի պայմաններուն ճշմարիտ և ուղիղ ըմբռնումէն է: Գեր. Օրմանեան գիտէ որ ամեն ճանքաները հարթ ու շիտակ չեն կրնար ըլլալ աշխարհիս վրայ և զառիվարներ կան ուրկէ կրնայ զլուրիկ

մարդ. բայց դիտէ նաև որ ամեն զսու-
վար, միանգամայն զսուվներ մըն է. վար
կը սահիս բայց վեր ալ կ'ելլես և միթէ
մարդկային ճակատագիրը՝ այս անդուլ ե-
լեւէջէն շինուած չէ՞ :

Կրօնքը ասիկայ ուսուցած է իրեն.
ինչպէս թեան քով Յարութիւնը նշմարած
է միշտ ու վայրկեան մը սրտաբեկ չէ ե-
ղած :

* * *

Այս եկեղեցականը որ Տիրայր կ'ստո-
րագրէ հայ լրագրութեան մէջ, մեր եպիս-
կոպոսներուն երիտասարդն է, ինչ որ
մեծ բան է հարկաւ և՛ մեր երիտասարդ-
ներուն եպիսկոպոսն է, ինչ որ աւելի
մեծ բան մըն է :

Ես կը սիրեմ իրեն առանց աղմուկի
գործունէութիւնը. ծուլութիւնը՝ ահա իր
թշնամին. Գեր. Օրմանեան աշխատիլ
կ'ուզէ միայն ու իր նշանաբանը՝ այն
խօսքն է թերեւս զոր նկարն թրաֆալա-
ւի առջեւ արտասանեց :

Իր վե՞րջը. ոսկեզօծ ակօսներու հե-
տամուտ չէ ինքը. իր թափառական քա-
րոյիչի չարքաշ գոյութիւնը՝ չի պատշաճիր
կակուղ բազմոցներու կեանքին. այս լեռ-
նաբոյս ծաղիկը բան մը չպիտի շահի բնաւ
թաղարի մը մէջ փոխադրուելով. իր առողջ
կազմուածքը՝ հանգիստի չի կարօտիր :

Ուսուցիչ ու հրապարակագիր է արդէն
և անփառունակ չէ այս աշխատութեամբ
լեցուն կեանքը :

Երբ ուրիշներ գաւառներէն ու վանքե-
րէն կուգան չեմ գիտեր ինչ ընելու հա-
մար հոս, ինքը հոսկէ վանք ու գաւառ
կ'երթայ օգտակար գործեր կատարելու
համար. ամբողջ դաս մը կայ ասոր մէջ :

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի ՇԻՔԱԿՈ

ԳԱՄԱՐԱՆԻԱ ՇՈՂԵՆԱԿ
ԼԻՎԵՐՈՒԼԷ ՆԻՒՇՈՐԳ

Բարեբաղդ զուգադիպութեամբ մը՝ մին-
չեւ հիմայ ծովու վրայ երեւցող ամենէն
արագընթաց շոգենաւով պիտի ճանբոր-
դեմ :

Թէեւ պատուիրուած է ուղեւորներուն
իրիկուան ժամը 4ին շոգենաւին մէջ գըտ-
նուիլ, ես անհամբերութենէս մղուած՝
հինգ ժամ առաջ ծովեզերք իջած եմ ուր
քարափին վրայ սնտուկներու ահագին
կոյտ մը ու անցորդներու իրարանցում
մը կայ հետզհետէ աւելցող :

Հոս ճամբորդութեան պիտանի նիւթեր
կը ծախեն, հոն բոպիկ ու գլխաբաց լաճեր
(boy) որոնք իրենց լուցկիի անսպառ
տուփերը քչելու կը նային ԲՉ, ԲՉ պո-
ռաւով ճիշդ ինչպէս Պօլիս շոգենաւնե-
րուն կամ Թիւնէլին մօտ կը հանգալիս :

Աչքս չորս դիս է հայ մը, գոնէ արեւ-
ւելցի մը նշմարելու համար չուրջս ու այս
օտարական ու զբաղած բազմութեան մէջ
առանձնութիւնս մոռնալու համար :

Անդադար հասնող կառքերէն տեսակ
տեսակ, այլազան գէմքեր դուրս կուգան :
Կան որոնք ուշադրութիւն կը գրաւեն .
մէկը մանաւանդ, ընկերացած սիրուն եւ
թուիս անգլուհւոյ մը, արեւեկքցիի ո-
րոշ տիպարը ունի . կ'ըսեմ ինքնիրենս
թէ հայ մը ըլլալու է, բայց տիկինը...
փոյթ չէ. կը մօտենամ քովերնին խօսակ-
ցութիւննին մտիկ ընելու համար, անգ-
լիերէն կը խօսին և յոյս ի դերեւ կ'ել-
լէ. շատ հեղ պատահեցաւ ասիկայ ինծի :

Ժամը 12 է գրեթէ. բազմութեան մէջ
իրարանցումը կ'աւելնայ. ձայները կը
բարձրանան և անոնց մէջ կը լսուի անգ-
լիական արտասանութեամբ Քէմբըլի, Քէմբըլի
բառը. ամէնուն աչքը դէպի
ծով կ'ուղղուի. անմիջապէս կը հասկնամ
թէ Քէմբըլիան կը մօտենայ և յիշուի

կը տեսնեմ զայն, չարժուն քաղաք, որ ահա կամաց կամաց յառաջանալով կուգայ խարսխիլ 500 մեթր հեռուն:

Քիչ մը վերջը ուրիշ չողենաւ մը քարափին կը մօտենայ և հոն եղող ամբոխն առնելով Քաճախային կը տանի:

Շատեր կուլան, իրենց սիրելիներէն բաժնուելուն. հարիւրաւոր թաղկինակներ կը ծածանին, ամենքն ազգականին, բարեկամին և կամ ծանօթին բարեկներուն կը պատասխանեն, և ես, որ մէկը չունիմ հոս, ամենուն միանգամայն կը պատասխանեմ:

Փամը 4ին նոյն չողենաւը ճամբորդներուն մնացած մասը կ'առնէ ու Քաճախայի ուղեւորներուն թիւը կ'ամբողջանայ:

Քիւնարտ ընկերութիւնը մասնաւորապէս Շիրակոյի արուեստահանդէսին համար երկու հատ քոյր չողենաւներ պատրաստած է, Քաճախայն և Լեւոնայն որ դեռ աւարտած չէ և որ առաջին անգամ պիտի մեկնի Լիվրուէ յուլի 8ին: Այս երկու չողենաւներուն իւրաքանչիւրը 12950 թօնօ է. 625 ոտք երկայնութիւն, 65 ոտք լայնութիւն, 43 ոտք խորութիւն և եօթը յարկ ունի. 1800 ուղեւոր կրնայ տանիլ և ծովին մէջ 18000 թօնօ ջուր կը տեղափոխէ:

Այս նոր Լեւիաթանին մէջ՝ առջի գործս եղաւ ամէն կողմ պտտիլ: Իրօք ժիւլ վէրնի ծփուն քաղաքն է այս. աչքիս զարնողը՝ նախ մեքենային ահագին սենեակն է, որ կամուրջին վրայ մեծ տեղ մը գրաւած է և որ ամբողջ նաւը երկուքի կը բաժնէ:

Մինչև հիմա շինուածներուն ամենէն կատարելագործեալը՝ այս հսկայ մեքենան ունի 30,000 ձիու զօրութիւն, որ 1889ին գտնուած նոր դրութեամբ՝ չողենաւին կրկին պտտաւները պիտի դարձնէ:

Այսպէս իւրաքանչիւր պտտաւակի համար կայ վեց լայնանիստ կաթսայ և իւրաքանչիւր կաթսայ ունի ութը վառարան ջուրը եռացնելու համար, որով ընդամենը կունենայ քառասունը ութը վառարան - շատ գիւղեր կան որ այսքան վառարան չ'ունին - որոնց մուխը կ'եղնէ երկու ծըրնելոյզներէ, ամէն մէկն եօթը մէթր տրա-

մագիծով և քառասուն մէթր բարձրութեամբ: Երեւակայեցէք Ղալաթայի աշտարակներէն շոյգ մը որ գիշեր ցորեկ այս մշտաժառ հնոցներուն մուխը կը քաշեն:

Կաթսաներն այնպիսի դրութեամբ շինուած են որ եթէ մէկուն վնաս մը պատահի, կարելի է միւսներով ճամբան շարունակել:

Մեքենային առաւելութիւններէն մին ալ սա է թէ կարող է չողին ետ չընցնել անմիջապէս, բան մը որ ստէպ պէտք կ'ըլլայ վտանգի պահուն:

Ասոր քով կայ երկրորդական մեքենայ մը որ զանազան աշխատութեանց կը ծառայէ. ան է որ չողենաւին մէջ հրդէհ պատահած պահուն անմիջապէս կրնայ զայն մարել. ան է դարձեալ որ ձմեռը ջերմաբաշխ գործիքով այս ընդարձակ քաղաքին փողոցները և սենեակները կը տաքցնէ. ան է դարձեալ որ կ'արտադրէ ելէքտրական լոյսը որ լուսաշող պարահանդէսի մը վայելուչ առատութեամբ սփռւած է հոս. անոր 1350 կոուցները - իւրաքանչիւրը 16 մոմի զօրութեամբ - գիշերները պայծառ ցորեկի մը կը փոխեն միշտ. ատկէ դատ հուժկու լոյսի ցայտք մը կը լուսաւորէ ծովը չողենաւին բոլորտիքը, որով նաւահանգիստներու մուտքը կը դիւրանայ:

Հարիւր յիսուն հոգի միայն մեքենային աշխատութեան մէջ ղեաղած են:

Քաճախայի արագընթացութիւնը պարզապէս դարհուրելի է. 22 ու կէս մըն ժամը, ինչ որ մինչև հիմա տեսնուած չէ դեռ և ոչ մէկ չողենաւի վրայ. արագութիւն մը՝ որուն իզնիմիտի երկաթուղին ապահովապէս կը նախանձի:

Տասնը չորս օրէն Ամերիկա երթալ և ետ դառնալու խնդիրը Քաճախայի շնորհիւ լուծուած է այսուհետև:

Մեքենային աջ կողմը՝ առաջին կարգի ուղեւորներուն յատկացուած է. ճաշակը ու հարստութիւնը միացած են ամեն շքեղութիւն ու պերճանք լեցնելու համար այս սրահներուն ու խուցերուն մէջ: Սեղանատունը (Dining saloon) այս կարգի համար, չորս հարիւր հոգի պարունակե-

լու ընդարձակութեամբ սրահ մ'է որուն չորս անկիւնները գտնուող ճամբաներէն ննջասենեակները կ'երթցուի . (Sleeping cabins) որոնք 139 հատ են և որոց ամեն մէկին մէջ կայ երկու կամ չորս անկողին և ոմանց մէջ մինչեւ իսկ վեց : Վրայի յարկն է կանանց սալօնը (Ladies saloon), հիանալի կերպով կահաւորուած , իր մէջ ունենալով անգլիական առաջին կարգի դործարաններէն պատրաստուած դաշնակ մը և երգահոն մը :

Կանանց սալօնէն ուղի մը կ'առաջնորդէ գրատունը ուր կայ 2500 հատոր գիրք : Սալօնին հակառակ կողմն է ծխելու սենեակը (Smoking room), ընդարձակ սրահ՝ վերջին հոլանտական դրութեամբ շինուած :

Մեքենային ձախ կողմը կ'իյնայ - երկրորդ կարգի կանանց սալօնը որուն մէջէն սանդուխ մը կ'առաջնորդէ երկրորդ կարգի սեղանատունը :

Ննջասենեակները 85 հատ են և կը պարունակեն նոյնպէս երկու, չորս, կամ վեց անկողիններ : Միջնայարկը բոլորովին յատկացուած է երրորդ կարգի ճանապարհորդաց և նաւաստեաց :

Գինեւն են առաջին կարգի համար 18 անգլիական ոսկիէ մինչեւ 80 ոսկի . 110 և 160 ոսկիի սրահներ ալ կան, մէջ մէջի սենեակներով . այս վերջին սրահներուն միոյն մէջ պիտի բնակի հռչակաւոր Բաթթին, երբ յառաջիկայ սեպտեմբերին Ամերիկա գոյ փայլելու համար տիեզերական արուեստահանդէսին մէջ :

Իսկ երկրորդ կարգի գինեւն են 9-10-12 ոսկի և երրորդ կարգի համար 5 ու կէս ոսկի :

Շոգենաւը պտտելու միջոցիս ծանօթութիւններ հաստատեցի . մեծ մասամբ անգլիացի էին ասոնք . թէև ուրիշ ազգեր ալ պակաս չ'էին այս հսկայ նոյեան տապանին մէջ ուր ամեն լեզու կը խօսուի :

Երբ իմ Թուրքիայէն գալս կ'իմանաին, շատեր կը հետաքրքրուին . ուրիշներ մեծ հաճոյքով տեղեկութիւն կը հարցնէին արեւելքէն :

Հիմա շոգենաւին մէջ կը տեսնեմ գուրսը տեսած ակնոցաւոր երիտասարդը , այս անգամ առանձին , մէկ քանի

անգամ վարանելէ վերջ կը մօտենամ և անգլիերէն կը հարցնեմ .

—Արդեօք պարոնը Պոլիս եկա՞ծ է, ուր կարծեմ տեսած եմ զինքը :

—Այո, պարոն, կը պատասխանէ ինծի, նոյն իսկ Պոլիսէն եմ և եթէ Հայ էք, հայերէն խօսի՞նք :

Անբացատրելի բերկրութիւն մը կ'զգայ մարդ այսպիսի օտար երկիրներ ազգակցի կամ երկրացիի մը պատահելով : Այս անակնկալ բարեկամը, Միլտօն Սերոբեան(1) Ամերիկա կը բնակէր և բժշկական ուսանող էր . Լիվրբուլ եկած էր իր եղբայրը տեսնելու համար որ հոն լաւ ընտանիքէ անգլուհւոյ մը հետ ամուսնացած էր . այն գեղանի տիկինը , որուն ընկերացած տեսայ զինքը շոգենաւ նստած ատեննիս , իր հարսն էր : Քաճառիս ճանբայ չեղաւ անմիջապէս, այլ մինչեւ կէս գիշեր սպասեց Լիվրբուլի նաւահանգստին մէջ, շատ դիւրութեամբ կրնայինք հասնիլ հետեւեալ օրը Գուլիսթաուն ուսկից պիտի առնէինք Եւրոպայի թղթատարը Ամերիկա փոխադրելու համար .

Առաւօտուն հասանք հոն . Իռլանտաի հարաւային ծայրը գտնուող այս նաւահանգիստը իրաւամբ աշխարհիս առաջինը նկատուած է : Հեռուէն հեռու մեր արեւելքը կը յիշեցնէ կարծես . ասոր բնական գեղեցկութիւնը՝ արուեստականին հետ միացած հիանալի տեսարան մը կը ձեւացնէ :

Հինգ ժամ կ'անցընենք հոն առանց զգալու, գեղեցիկ ու նպաստաւոր օդով մը, դիտելով մեր շուրջը :

Քիւնարտ ընկերութեան փոքր շոգենաւ մը մեզ կը դիմաւորէ բերելով իրեն հետ աւելի քան հարիւր իռլանտացի ուղեւորք, որոնք չեն կրցած շաբաթ օր Լիվրբուլ հասնիլ , և որ երկաթուղիով աւելի շուտ եկած են ցամաքէ :

Նաև այս շոգենաւը մեզ կը բերէ Թըլթատարը Եւրոպայի . . . 675 հատ մեծ պարկեր :

Երեւակայելու է թէ ինչ է թղթակցու-

(1) Նախորդ տեսուչ Բերայի ազգային վարժարաններուն :

Թիւնը հին ու նոր աշխարհներուն մէջ: Բնական է որ նոյն շաբթուն ուրիշ շոգեհաւներ ևս տարբեր սուրհանդակներ տարած են, վասն զի շաբաթը առնուազն 3—4 շոգեհաւներ կ'երթան հոն Անգլիոյ այլ և այլ կողմերէն:

Ժամը 4 էր երբ բաժնուեցանք Գուլիոթառնէն. Իրլանտայի հարաւային շրջագիծին կը հետեւինք չորս ժամի չափ, մինչեւ որ մեր աչաց առջեւ պարզուի անհուն ովկիանոսը: Նաւը կ'սկսի երերալ հովը կ'սկսի ազատ ազատ փչել: ջուր միայն կը տեսնենք ամեն կողմէ: ջուր, ջուր: Բաց ի մի քանի ծովային թռչուններէ որք մեզ կ'ընկերանան կարծես ողջերթ մագլթելով և շոգեհաւները զորս ետեսնին կը թողունք, ուրիշ կենդանութեան նշան չի կայ այս հեղուկ ու անվերջ անապատին մէջ:

Առաւօտուն ելնելով մեր ընթացիկ քաղաքին մարդահամարը կ'ընեմ ճիշդ ինչպէս պիտի ընէր Պատրիարքարանի պաշտօնեայ մը:

Մեր նաւը դըրժէ Գնալը Կղզին չափ բազմութիւն ունէր. կային 1701 հոգի, երկու սեռէ:

Առաջին կարգն	ուներ	233
Երկրորդ	»	179
Երրորդ	»	839
Նաւաստիք և սպասաւորք		450

1701

Մինչեւ երեքշաբթի երեկոյ օգը անձրեւի է և հովը կը փչէ. ուղեւորաց կէսէն աւելին հիւանդ են և քաշուած իրենց խուցերուն մէջ, մանաւանդ տիկնայք: Միայն երիտասարդներէն ոմանք անձրեւի տակ, կը ցատկեն, կը կայթեն, հոգ չընելով նաւին երերալն որ իրենց զբօսանքի տեղ կը բռնէ:

Տեսակ տեսակ խաղեր կը խաղան որոնց երբեմն կը հետեւին նաեւ քաջասիրտ կիներ որոնք շատ մը ուղեւորութիւններով ա'լ ծովի վարժ են բոլորովին:

Ուրիշներ սալօնին մէջ, կարգալով, դաշնակով թղթի, նարտի, տօմինօյի խաղերով ժամանակ կ'անցընեն:

Անգլիացիք ինչպէս իրենց երկրին մէջ

նոյպէս ալ հոս պաւէն (bar) չեն բաժնուիր. առտուանց կանուխէն մինչեւ երեկոյ ժամ տաս ու կէս, երբ արդէն գոցուելու ստիպուած է այդ նաւային դիւնետունը:

Ընդհանրապէս կերակուրները գոհացուցիչ չեն. ոչ գարեջուր կայ ոչ գինի. առատ սեւ թէյ, նաեւ ոռօղիֆ, բօրբիճ և բրդեղինկ:

Երեքշաբթի երեկոյ ժամը 8ին յանկարծ թանձր մառախուղ մը կը պատէ ծովը. մեր հսկայ նաւին մէջ վախոյողներ պակաս չեն. ահ ու դողի ճիչեր կը լսեմ. ամեն բան կարելի է, Ովկիանոսին մէջն ենք մինակ, միս-մինակ:

Այս շուարումը քունով կը մոռնանք և երբ առաւօտուն աչերնիս կ'ընենք, կը տեսնենք պայծառ օդ և խաղաղ ծովը:

Վեր կ'ելնեմ, կը տեսնեմ ամենուն դիմացը վրայ խինդի և ուրախութեան նշաններ. ամենքը կը կայտուին, կը ցատկեն, մեծէն մինչ փոքրը երգ, խաղ, պար, խրարու կը յաջորդեն:

Մինչեւ այն ատեն ամբողջ նաւին բազմութիւնը հաւաքուած տեսած չէի. ամեն ոք առանձնապա՛ծ ու քաշուած էր. ամենքը ժողովուելով՝ կարծես թէ այն գիշեր տեղ մը հանդիպելով այսքան ժողովուրդ առածի տպաւորութիւնը կ'ունենայինք:

Ամեն ոք ձգած իրեն ձմեռնային սրջը, դուրս թափած է ինչպէս խոունջներն անձրեւի ժամուն:

Նոյն երեկոյ Լիվըրքուլի նաւաստեայ այրիներուն ի նպատտ նուագահանդէս կը տրուի կանանց սալօնին մէջ. վայրկեանին հասոյթ 70 անգլ, ոսկի. քաղաք կայ ուր 20 օր աշխատելու է այսպիսի դուրս մը ձեռք ձգելու համար:

Պատրաստ շարձումներ կան մեր շոգեհաւին յատուկ և ատոնց մէջ խսկոյն կը տպեն, նաւին տպարանին մէջ, երգերու, երգողներու կամ դաշնակ ածողներու անունները:

Թէեւ ունէինք մեզ հետ էտուառ ժօյտ, Անգլիոյ առաջին երգողը, որ Շիդակօ կ'երթար մէկ գիշերը հազար անգլ, ոսկի պայմանագրութեամբ, սակայն չի հաճե-

ցաւ երգ մը երգել, ասոր հետ մէկտեղ մեր միւս երգողներն անկից պակաս չմնացին:

Նուագահանդէսի յաջորդեցին սքիշներ, սիրուն, պարագային յարմար, որուն մէջ շնորհակալութիւն նաւապետին՝ որ հոն ներկայ կը գտնուէր. ինքն ալ փոխադարձ շնորհակալութիւն յայտնեց ու խնդրեց որ յոտնկայս երգեն թագուհւոյն նուիրեալ God save the Queen երգն, որով վերջացաւ սոյն գողտրիկ երեկոյթ որ հազուագէպ է:

Հինգշաբթի երեկոյ երկրորդ կարգն ալ չուզէր առաջինէն ետ մնալ, և նուագահանդէս մ'ալ իրենք կը կազմակերպեն փայլուն, որուն մէջ դաշնակի, ջութակի, գօրնէի, ձիթէրի ընկերակցութեամբ սքանչելի եռաձայն ու քառաձայն եղանակներ նուագութեան որոնց մէջ վարժ են մանուկէն Շուէտացիներն:

Հոս ալ 20 ոսկի ժողովուեցաւ դարձեալ նոյն նպատակին: Իսկ ուրբաթ երեկոյ մեծ պարահանդէս նաւուն վրայ: Ասիկց վերջը մէկ կողմէ նաւաշինութիւնը կատարելագործելով՝ կարծեմ մարդիկ ամեն ինչ նաւուն վրայ պիտի ընեն ինչ որ ցամաքին վրայ կարող են ընել: Պարերը մինչեւ առաւօտ տեւեցին, ոմանք պարելու փափաքէն, այլք առաւօտուն անվտանգ Ամերիկա հասնելու ուրախութենէն չեն քնանար:

Հետեւեալ առաւօտուն կանուխ կ'ըսկսինք Նիւ-Եորքի հմայիչ ծոցին մէջ մըտնել, մուտք մը որ 2 ժամէ աւելի կը տեւէ և ուր ուրեմն կը հասնինք ողջամբ:

ՏԻԳՐԱՆ ՔԵԼԷԿԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Ուսումնական Խորհուրդը չընդունիր որ իր փառքը նսեմացնելու ելլենք. մամուլին թելադրութեանը կարօտութիւն չունի. իր յօրինած կանոնադիրը նախատեսած է արդէն կարող ուսուցիչներ հասցնելու հարկը ու գործնական միջոցներուն վրայ ալ մտածուած է: Ուսումնական Խորհուրդին պատկան դափնիները գողնալու դիտաւորութիւնը չունէինք, երբ ուսուցիչներու վրայ մեր յօդուածը հրատարակեցինք, պարզապէս կարծեր էինք թէ մեր կրթական վարչութիւնը բան մը ըրած չունի ձեռնհաս ուսուցչական մարմին մը պատրաստելու գործին համար:

Պէրպէրեան էֆէնտիի Արեւելի մէջ հրատարակած պատասխանէն ետքը մեր կարծիքը անգամ մը ևս հաստատուած կը տեսնենք:

Ուսումնական Խորհուրդէն քորձուին, ու թէ որ կը փափաքէք, Կրթական Խորհուրդէնք իրենց արուեստը գիտցող ուսուցիչներ ունենալու համար:

Եթէ կրթական Մանանային 44րդ յօդուածովն ամեն բան եղած լինցած կը համարուի այս մասին, եթէ Դպրոցատէր Տիկնանց ու Միացեալ Ընկերութեանց առաջարկելով հոս վարժապետնոցներ հիմնել՝ գործնական բան մը ըրած ըլլալ կը կարծուի, ներուի մեզ որ այդ պատրանքը փարատենք:

Ecole normale և école normale supérieureի տարբերութիւնները բացատրելով զմեզ ամիբերան ձգելու տեղ՝ Ուսումնական Խորհուրդը նսեմացնելու արդէկ կընէր եթէ նախ դրած քորձուին համար մեր ցոյց տուած առաջարկութիւնը պարզապէս ընդգրկելու խոնարհամտութիւնը ցոյց տար որ կարծեմ վերջ ի վերջոյ, մեծաբանութենէ աւելի կարժէ:

Պէրպէրեան էֆէնտի նախամեծար կը համարի օրէնքին ու կանոնին սահմանը տալ ու Տէքաութի Բէրքի վրայ ձառնել վկայութիւն բերել որոնք դասական միտք մը ունենալու ապացոյց են հարկաւ, բայց

գործնական միջոցներու տեսակէտէն կուտ մը չեն ըներ:

Ու հաստատուելու համար որ երկու ընկերութիւններու միջոցով վարժապետ հասցնելու գաղափարը որքա՞ն անտեղի է, կը բաւէ յիշեցնել որ Միացեալ Բնկերութիւնը, Ուսումնական Խորհուրդէն շատ առաջ, ատոր աշխատած է առանց յաջողելու:

Յետոյ, կ'երեւի թէ Պէրպէրեան էֆէնտի մայրաքաղաքիս մէջ չի բնակիր, վասն զի բոլորովին անգէտ կը թուի երկու Բնկերութիւններուն նիւթական անձուկ, խիստ անձուկ վիճակին. զանոնք ոսկիի հորթը կարծել՝ բաւական վերացեալ մարդու գործ է:

Ասկէ զատ կը պնդենք որ վարժապետ հասցնելու համար կարող վարժապետներ կը պակսին: Ամեն բանի կարողն ունինք, կարող փաստաբան, կարող խմբագիր, կ'ըսէք ինծի, և միայն կարող վարժապետ կը պակսի:

Կարող խմբագիր, ո՛չ. չունինք ատիկայ ու չենք ունեցած բնաւ. կարող փաստաբան, արուեստը աղէկ կամ գէշ, աւելի գէշ քան թէ աղէկ ի գործ գնելու չափ թերեւս. բայց իրաւագէտներ պատրաստելու չափ, ո՛չ, ապահովապէս ո՛չ:

Գո՛հ էք անկեղծութենէս. բայց ներեցէք որ ետեւէն աւելցնեմ, նոյն անկեղծութենէն մղուելով, թէ հայ ուսուցչական մարմինը շատ յետեւալ, շատ ոչորմելի մարմին մըն է և վարժապետանոցի մը մէջ դասախօսելու կարողութիւնը իրենց բոլորին ալ կը զլանամ:

Ահա իմ գաղափարս, ամբողջ ու անկեղծ գաղափարս:

Մեր կրթական բոլոր դրութիւնը բարւոքման կարօտ է, վերէն ի վար փոփոխութեան ու շրջումի և մանկավարժութեան ճանաչելութեան գործն է այս բարւոքումը և մինակ ե՞ս եմ արդեօք Պոլսոյ մէջ որ հայ մանկավարժ մը չի ճանչնամ:

Ուրեմն Եւրոպայի դպրոցները մարդ խրկեցէք առանց վայրկեան մ'իսկ կորսնցնելու. շատ է արդէն որքան ցարդ յապաղեցանք:

Ձեր շինած կանոնագիրը որուն վրայ

կը դուրսդուրաք, բանի մը չալտի ծառայէ. օժանդակ կը փնտռէք ապէն անոր գործադրութեանը համար և ամենէն կարեւոր օժանդակները չունիք, ուսուցիչները: Կրթական կանոնագիրը՝ ընթերցանութիւն չգիտցող կարճատես մարդու անոց տալու կը նմանի, որպէս զի կարենայ անով կարգալ. նախ ընթերցանութիւն սորվեցուցէք անոր, վերջը խրկեցէք Տօքթօր էամէրեանին:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ՁՈՒԿԻՆ ՓՈԽԱՐԵՆ

[ԺՈՂՈՎԳՐԱԿԱՆ ԲԱՐԵ]

Խենդուկ, շուտիկ տղայ մըն էր Համբիկ, տասներեօթը տասներեօթը տարու, աչքը փողոցներուն մէջ բացած, մանրանկարը ապագայ այն մեծ սրիկային որ կա՛մ ջրհանին ետեւէն պիտի վազէ խորազանը ձեռքը կամ հրապարակներու վրայ իր խռպոտ ահագին ձայնով ձուկ պիտի ծախէ: Մայրը, որ լուացարարուհին էր նաւամատոյցի բեռնակիրներուն, մինչեւ երկու տարու մեծցուցած էր գայն լուացարանին մէջ, չոր հաց մը ձեռքը տուած, զոր մանուկը կը կրծէր առտուընէ մինչեւ իրիկուն՝ ճղճղալով ճնճնալով: Յետոյ, որովհետեւ մայրը օրին մէկը չնշահեղձ եղած էր խամ ածուխի մուխէ և հայրն ալ, որ ձկնորս էր, ծովը ինկած էր ու խղզուած, Համբիկ գրեթէ անտէր մնաց ու վեց տարեկանէն անդին փողոցներուն մէջ սկսաւ թափառիլ, զիւշերները հաղիւ պառկելու տեղ մը գտնելով ու ցորեկներն ալ հաղիւ կտոր մը հաց: Այս տաժանելի կենցաղը չէր մեռցուցած զայն, ընդհակառակն հուժկու մարմին մը և աննկուն հոգի մը պատրաստած էր: Որովհետեւ երջանկութեան և հեշտակեցութեան վրայ գաղափար չունէր, իր հիմակուան վարած կեանքը աշխարհի երջանկագոյն կեանքը կը կարծէր: Առտուընէ մինչեւ իրիկուն փողոցները կը շրջէր, պատահական ծառայութիւններ ընելով,

ջուր կրելով տուները , բեռներ տանելով ասդին անդին , և այլ մանր մունր գործեր ընելով , որոցմէ ձեռք ձգած ստակին մէկ մասը իր ապրուստին կը գործածէր ու միւս մասն ալ ապահով տեղ մը կը սահէր՝ ապագային աւելի շահաբեր գործով մը զբաղելու զիտումով : Իր աշխուժութեամբն ու յանդգնութեամբն ամենուն համակրանքը կը զրաւէր : Շատ անգամ , երբ ուրիշ զբաղում չունենար , նաւամատոյց կը վազէր ու շոգենաւէն ելլողներէն ոմանց բեռները շարկելով տուն կը տանէր :

Քիչ չատ հարուստ թաղի մը մէջ հաստատած էր իր գործերուն գլխաւոր կեդրոնը՝ պարագայ ժամերուն , իրը կատարեալ ստամբակ մը , միմոսական դահլիճն ձեւերով , կատակաբանութիւններով , թռչունի և կենդանիներու ձայնի նմանութիւններով կը զուարճացնէր թաղեցիները , մանաւանդ զպոռոց դացոյ փոքր աղջիկները , որք զրեթէ ամեն իրիկուն անոր չուրջը կը խռնուէին ու կ'ըսէին .

— Հայտէ , Համբիկ , կատուի թախ-
լիթ մը ըրէ մեզի :

Այն ատեն ստամբակը կը սկսէր կատուններու ճմարիտ պայքար մը որ միշտ կը վերջանար արուին՝ այսինքն իրեն փախուստով : Մանկուհիներու ճվլլուքը հաճոյք կը պատճառէր չարածճի տղուն : Ինք որ բնաւ գիտակցութիւն չունէր ոչ ծնողքի , ոչ քրոջ , ոչ ու է սրտակցի գորովի վրայ , այն գաղտնի զօրութենէն մղուած որ ամեն մարդու սիրտին խորը կ'ապրի ու , պատեհ առիթով , դուրս կը պոռթկայ , Համբիկ , անգիտակցաբար , համակրանք մը , սէր մը զրեթէ կը զգար այդ փոքրիկ անմեղուկ արարածներուն վրայ , ու ալ անգիմագրելի պէտք մը եղած էր իրեն անոնց պչրական շատխօսութիւնները լսել , ու գոհացունել անոնց ամեն սոցալական պահանջումները :

Օր մը , իրիկուան դէմ , նաւամատոյց իջած էր , իր սովորութեան համեմատ բեռ փոխադրելու համար : Ամեն տեղ նոյն տեսարանը կը ներկայանայ . շոգենաւը մօտենալուն պէս , խումբ մը բոկոտն տը-

ղաքներ , որք հոն կը սպասեն ակնդէտ , սովալլուկ գայլերու պէս կը թափին շոգենաւէն դուրս ելլողներուն վրայ , իրարմէ յափշտակելով անոնց ձեռքը գտնուած բեռները : Համբիկ այս մասին բացառիկ ճարպիկութիւն մը կը ցուցունէր , ամենէն առաջ ինք կը նետուէր ու ամենէն « ետղը միւլթէրի » ձեռքի բեռն առնելով մինչև անոր տունը կը տանէր : Արդ , այն իրիկունը , շոգենաւը մօտենալուն , բեռնակիրներն արդէն կը սպասէին . դուրս ելլողներուն մէջ շրջողէն հագուած օրիորդ մը երեւցաւ որ ձեռքը բռնած երկու խոշոր ծրարները երկնցուց Համբիկին . սա առաւ դանոնք , անգամ մը աղջկանը երեսը նայեցաւ , և յետոյ հարցուց թէ ո՞ր պիտի տանէր ծրարները . մանկամարդ աղջիկը թրթռուն ու ներգաշնակ ձայնով մը , որուն մէջ տիրական չեղտ մը կար , ըսաւ .

— Ետեւէ՛ս եկուր :

Համբիկ բաղուկներուն տակ զետեղեց ծրարներն ու հետեւեցաւ մանկամարդ աղջկան , քիչ մը խռոված անոր մեծալոք կերպարանքէն ու անուշ բուրումներէն որք կը խուսափէին անոր ամբողջ իրանէն : Մինչև այն ատեն ասանկ բաներ չէր զգացած . չըջագգեստին շրջիւնը , մանրիկ ոտքերուն ցատքտուն հարուածները քարայտաւիին վրայ , զեղնագոյն ժանեակով եղերեալ հովանոցին նազելական ճօճումը և մանաւանդ ծոծրակին սպիտակ միսը որ կ'երեւէր օձիքին եռանկիրնաձեւ ճեղքէն , բոլորովին կը գինովցունէին փողոցի այդ ստամբակը , զգացած հաճոյքն այնքան բուռն եղաւ որ կը փափագէր որ ճամբան անհունապէս երկար ըլլար , յաւիտենապէս վայելելու համար այդ քաղցր երանութիւնը . մինչև այն ատեն իրեն անծանօթ երազանքներ , խառն ի խռոն , կը խուժէին միաբին մէջ , կը գգուէին իր թագուն զգայութիւններն . ու կը հետեւէր այդ մտացածին էակին , զգլխիչ բոյրերով ապրի մթնոլորտի մը մէջէն ինքնաբերաբար քալելով կարծես , լիաթոք ծծելով իր ռնդունքները շոյող այդ խելայեղիչ հոսանքաւոր :

Մանկամարդ աղջիկը մէկէն կանգ ա-

ուսւ դրան մը առջեւ և դառնալով Համբիկին։

—Տղայ, ըսաւ առանց անոր երեսը նայելու, հոս ձգէ և գնա։

Եւ քառասուննոց մը դրաւ ստամբակին ձեռքը։

Համբիկ վրան անգամ չնայեցաւ ստակին, անախորժ յուսախաբուծիւն մը կրածի պէս պահ մը քարացաւ մնաց, բայց շուտով խելքը գլուխը գալով՝ դանդաղօրէն հեռացաւ, ակռաներուն տակէն մրմռալով։

—Վա՛յ անիծից, ծօ՛ էս ասանկ աղւոր արածիկ չէի տեսեր, անի՛նչ ճիտ էր։

Առաջին անգամ ըլլալով այն իրիկունը չգնաց իր սովորական փողոցն ու գլուխը չժողկեց փոքր աղջիկները, որոնք զարմացած այդ բացակայութեանը վրայ՝ ըսին իրարու։

—Համբիկը ո՞ւր է, չեկաւ աս իրիկուն, խօսք տուած էր քի շունի պէս հա՞ջեր։

Եւ շատ տխուր եղան փոքր աղջիկներն այն իրիկունը։

Համբիկ հաց չկերած պառկեցաւ այն գիշերը՝ իր երազներուն մէջ՝ ընկզմելու համար։ Ծառ հեղ այսպէս կը պատահի՝ զգացում մը, որ կայ մարդուս ներսիդին և շատ չի յուզուիր, անակնկալ առթիւ մը մէկէնիմէկ՝ երեւան կուգայ՝ սաստիկ ցնցումներով որք ամբողջ էութիւնը կը դրդդեն։ Համբիկ մինչեւ այն օրը շուայտ զգացում մը գրէթէ չէր ունեցած այդքան բուռն կերպով. և այն իրիկունն փորձութիւնը շատ գէշ ազդած էր վրան։

Ու կը մռտար իր խշտիկին վրայ երկընցած։

—Ծօ անի՛նչ ճիտ էր։

Սակայն, երբ առտուն արթնցաւ Համբիկ, երեսը կը փողփողէր, ժպիտ մը կ'երերար շուրթերուն վրայ։

Ըսաւ ինքնիրեն։

—Ա՛լ աս մահալէէն կ'ելլամ, հոն կ'երթամ։ Կէմ քեարը շատ կ'ըլլայ պէլքի, Կէմ։

Ոտքն ընդմիջեց, աչուքներուն մէջ շողիւն մը փայլեցաւ և ձեռքը ճակատին դարնելով։

—Ծօ՛ անի՛նչ ճերմակ ճիտ էր, մռըտաց։

Ըսածին պէս ալ ըրաւ. նոյն օրն իսկ այն փողոցին մէջ, — ուր կը գտնուէր առջի իրիկունն օրիորդին տունը, — փնտռեց և գտաւ պարտէզի մը անկիւնը, փսոսի պէս փոքր խցիկ մը, ուր փոխադրեց իր յարգէ անկողինը, քանի մը մանր մունր գոյքերը։

Ա՛լ այնուհետեւ այդ փողոցին մէջ թափառեցաւ, ամենուն ցուցունելով իր ժպտուն դէմքը, ամենուն համակրանքը վաստկելու ձեւեր ընելով։ Հոն ալ սկսաւ իր ծառայութիւններն ի գործ դնել, հիմակ աւելի եռանդով, աւելի աշխուժով. գրէթէ ամեն վայրկեան կ'անցնէր կը դառնար այն տունին առջեւէն, որուն հրապուրիչ պարունակութիւնը պատճառեղած էր իր փոխադրութեան. երբեմն պատուհանը նստած կը տեսնէր զայն ու գաղտագողի ակնարկով մը կը դիտէր անոր դէմքը, մանաւանդ սպիտակ ծոծրակը, որուն վրայ կը սարսալային սեւաթոյր մազերու քանի մը ցանցաւ փնջիկներ։ Մեծ վայելք մըն էին իրեն համար այդ վայրկենական ու վաղանցիկ նայուածքները։

Բայց պառկած տունը շատ տխուր կերպարանք մը կը ստանար հէք Համբիկ և աւեն անգամ որ իր յոգնած դադրած ոտքերը կ'երկնցունէր հանգստաւէտ խըշտիկին վրայ, կը մրմնջէր։

—Անի՛նչ ճիտ է պէ։

Իր յանդուգն բնաւորութեան օգնութեամբ, յաջողեցաւ իր ոտքը գնել իր երազած տունէն ալ ներս։

Հարուստ ընտանիք մը կը բնակէր այդ տան մէջ, հայր մը, մայր մը, երկու զաւակ՝ աղջիկ մը, օրիորդ Սիրանոյշ, և մանչ մը։ Կնոջական ամեն գիւթութիւններով յղիացած սիրուն օրիորդ մըն էր Սիրանոյշ, որուն շատ երիտասարդներ աչք ունէին, թէ՛ գեղեցկութեանը և թէ հարստութեանը համար. բայց ինք դժուարահաճ էր և բնաւ ականջ չէր կախեր իրեն եղած առաջարկներուն. գաղափարային աղջիկ մըն էր, որ այն ատեն ամուսնական կեանքին մէջ պիտի մտնէր, երբ գտնէր իր մտաւարկարը, որ տակաւին շատ

հեռու ըլլալ կ'երեւակայէր ինք: Բայց իր կարծիքը սխալ ելաւ. երեկոյթի մը մէջ— ո՛հ, ի՞նչ պիտի ըլլար շատ մը աղջիկներու և երիտասարդներու վիճակը, եթէ չըլլային այս երեկոյթները— հանգիպեցաւ գեղեցիկ, իր երազած ձիրքերով օժտուած երիտասարդի մը որուն անմիջապէս համակրեցաւ: Աւելորդ է ըսել թէ երիտասարդն առանց վարանելու փոխարինեց այդ համակրանքը՝ հաճոյալի խօսքերով:

Նորարծարծ սիրոյ քաղցը վայելումները շատ կարճ կ'երեւան սոյն երեկոյթին քանի մը ժամերու միջոցին. զիշերը կ'անցնէր ամպի բրդաւոր մը պէս զոր հովը կը վարէ կը տանի՝ երբ հազիւ կարմրերփնուած է նորածագ արեւին շաւալէն: Տեսակցութիւնը նորոգել անկարելի ըլլալով, երիտասարդը կը յանդգնէ իր սիրտին բոլոր դգացումները ծաղկենկար ու անուշաբոյր թուղթին հաղորդել և զայն զրկել իր սիրեցելոյն: Օրիորդ Սիրանոյշ զոյգով ձեռքով և ճակտին վրայ վաղանցիկ շիկնումով մը կարգաց սիրոյ այդ բոցիկէն արտայայտութիւնը, որ կը վերջանար պատասխան ընդունելու պաղատանքով: Մանկամարդ աղջիկը որուն կը պակսէր տակաւին սիրալին յանդգնութիւն, բանի մը օր մտածեց՝ միշտ ձեռքը բռնած երիտասարդին սիրերգը, որուն աղապատանքը կը մոլմոլէր իր փափկասուն սիրտը. վերջապէս որոշեց պատասխան գրել, բայց ի՞նչ կերպով անոր ձեռքն հասցնել զայն. ամենափոքր զայլակցութիւն իր անուան շուրջը՝ կը սոսկացնէր զինքը. երկար մտածեց այս փափուկ կէտին վրայ և յանկարծ լոյսմը ծագեցաւ միտքին մէջ:

Օր մը, երբ տունը իրմէ զատ ոչ ոք կար, պատուհանը նստաւ և սպասեց:

Համբիկ կ'անցնէր գողունի ակնարկներ նետելով դէպ ի պատուհանը. յանկարծ կանգ առաւ. հաւատա՞ր աչուրներուն. բայց սոյն, զինքը կը կանչէր անիկա. նորէն նայեցաւ. աչուրներուն բովանդակ սեւեռումովը և ա՛լ կասկած չունեցաւ, օրիորդը զինքը կը կանչէր. երա՞զ էր արդեօք:

— Թօհա՛ֆ պան, մրմռաց ստամբակն ու ներս մտաւ. զոնէն որ բացուած էր:

Հիմակ Համբիկ իր դիմացն ունէր Սիրանոյշը, որ իր թովիչ աչուրներն անոր վրայ յառած ըսաւ.

— Համբիկ, քեզի բան մը ըսեմ նէ կ'ընե՞ս:

— Հազար պան ըսէ՛՜ ամենն ալ ընեմ, պատասխանեց Համբիկ, անանկ սրտաղեղ անձնութեան շեշտով որ մանկամարդ օրիորդը ուրախութենէն սարսռաց:

— Երգում ըրէ որ մէկուն չպիտի ըսես ինծի ընելիքդ, յարեց Սիրանոյշ:

— Չեմ ըսեր, ա՛ս խըտար:

Օրիորդը՝ դրասանգներով զարգարուն քորսածին տակէն նամակ մը դուրս հանեց, պահ մը վրան նայեցաւ վարանումով, յետոյ ծռելով դէպ ի Համբիկին աւանջը, անանկ որ իր շունչով անոր երեսը չոյեց, բան մը փախաց: Ստամբակը աղջկան այդ դիրքէն օգտուելով՝ անոր ծոծրակը դիտեց ու հառաչ մը արձակեց:

Քիչ յետոյ դուրս ելաւ Համբիկ՝ գլուպանին մէջ ունենալով իրեն յանձնուած նամակը, զոր հասցէին պիտի տանէր, և մրմռալով.

— Աճայի՛ պ, աս նամակը միւսիւ Արամին պիտի տանիմ, բէք աղէ՛կ. ամա ինչո՞ւ անոր նամակ կը խրկէ կոր. մէջը ի՞նչ դրած է աճապա՞... վա՛յ, հասկըցայ, հը՛... ըսել է՝ գործը էփեր էն... տանի՞մ մի չը տանիմ... ամա տանիմ նէ աղէկ կ'ըլլայ, չիւնքի հեղգէթ նորէն պիտի խրկէ... հինգ խրուշն ալ կէշ վարա չէ... ամա վարաին տեղը էյէր ան ձերմակ ճիտէն...

Լռեց, չհամարձակելով բարձրաձայն արտայայտել գաղափարը որ փայլակի արագութեամբ անցած էր միտքէն:

Ա՛լ հիմակ, պատուհանին առջեւէն անցած տանը, Համբիկ բացէ ի բաց, առանց խպնելու, կը ժպտէր Սիրանոյշի երեսին, որ իր հինգ զրուշին առաջ բերած երախտագիտութեան նշանը կը կարծէր այդ խորհրդաւոր ժպտը:

Ստամբակին մտածումը պարապ չեկաւ. քանի մը օր ետքը, երբ, իրիկուն մը, մթնելուն մօտ, Համբիկ դրանը առջեւէն կ'անցնէր, Սիրանոյշ որ կեցած էր հոն, նորէն թուղթ մը սպրդեցուց անոր ձեռքը՝ մրմնջելով.

—Նորէն անոր տար, Համբիկ :

Տղան , քառորդը գրպանը նետեց ու նամակը հասցէին տարաւ :

Չորս օր ետքը նորէն նամակ մը՝ Սիրանոյշին ձեռքէն Համբիկին գրպանը սահելով՝ յաւիտենական հասցէին յանձնուեցաւ :

Եւ ամեն անգամուն ստամբակը հարցատացաւ հինգ զրուշնոցով մը :

Հինգերորդ անգամուն , երբ մանկամարդ աղջիկը նամակը յանձնեց Համբիկին ու գրամն ալ պիտի տար , տղան ետ հրեց անոր ձեռքն , ըսելով .

—Ա՛լ փարա չեմ ուզեր :

—Հապա ի՞նչ կ'ուզես :

Համբիկ Սիրանոյշին մօտեցաւ , քծնող շունի մը պաղատանքն իր աչքերուն մէջ , մեղմիւ բռնեց անոր թեւէն և գրեթէ ականջն ի վար ըսաւ դողահար ձայնով .

—Ճիտե՞դ պաշիկ մը :

Մանկամարդ աղջիկը բռնուն շարժումով մը ետ քաշուեցաւ , աչուրները զայրոյթով շողացին , կարմիր բարակ շուրթերը փոթուեցան , և զսպուած մոլեգին շեշտով մը ըսաւ .

—Կորսուէ՛ սըկէց , չափիւն շուն... կորսուէ՛ , կ'ըսեմ...

Համբիկ աղջկան այս զայրացկոտ կերպարանքէն քիչ մը սարսափահար գրպանը դրաւ նամակն ու գլուխն սպառնազին երեցունելէ ետք՝ խոյս տուաւ ըսելով .

—Միտքե՞դ չ'իլլայ այս ըրածդ , չըլդի՛կ :

Ա՛լ անկից ետքը Համբիկ բնաւ չերեւցաւ այն կողմերը . ամեն մարդ զարմացաւ այս անակնկալ անհետացումին վրայ . հարցուցին փնտռեցին իրեն համակրողները . մանաւանդ փողոցին մանրիկ աղջիկներուն շատ դպաւ անոր պակասութիւնը :

—Զավալը Համբիկ , աճապ անօթութենէ մեռա՞ւ :

* * *

Տարիներ անցան :

Օրերորդ Սիրանոյշ երջանիկ եղաւ , ամուսնանալով այն երիտասարդին հետ զոր կը պաշտէր և զոր ամեն կատարելութիւններով օժտուած կը կարծէր :

Մեղրալուսինն անցած էր մեղրի պէս

անուշ , բայց անոր պէս ալ վազանցիկ : Հէգ աղջիկը , որ անկեղծ սէր կը տածէր իր ամուսնին վրայ , ահագին , հոգեմաշ յուսախարութիւն մը կրելու դատապարտուած էր : Բայց որ անդորր կենցաղ մը երազած էր վայելել ամուսնական կեանքի մէջ . իր այս երազը իրականութեան չփոխուեցաւ սակայն . վասն զի ամուսինը , յեղյեղուկ երիտասարդ մը , շուտով յափրացաւ զգուեցաւ այս կազկանդեալ կեանքին հեշտութիւններէն , այդ յարկէն դուրս փրնտուեց հաճոյքի այն աշխարհը , որ բաց է ամենուն և իր զգուանքները չօայլօրէն կը բաշխէ :

Սիրանոյշ նախ ուզեց ինքզինքը խաբել էրկանը բռնած ապօրէն ընթացքի մասին . բայց շատ չանցած , ամեն պատրանք վանելու ստիպուեցաւ , վասն զի ամուսնին այնքան անտարբեր եղաւ իրեն նկատմամբ որ խեղճ մանկամարդ կինը , չհամարձակելով իր ծնողաց օգնութեանը դիմել , վասն զի անոնք քիչ մը հակառակած էին այս միութեանը , ուրիշ միջոցներու ձեռնարկեց . նախ ինք հետամուտ եղաւ գտնել պատճառն որով ամուսինն այդքան պաղած էր իրմէ . կնոջական սուր հոտառութեամբ կռահեց որ ուրիշ կին մը իր իրաւունքները յափշտակած էր ձեռքէն , ամուսնին սէրն ու համակրութիւնն ինք վայելելով :

Օրերով մտածեց ընելիքին վրայ և վերջապէս մճուական որոշում մը տուաւ : Լսած էր թէ նշանաւոր կին հաւահմայ մը՝ սքանչելի գուշակութիւններէ զատ՝ իրեն պէս վշտակիրներուն ցաւերը կը դարմանէր անանկ գեղերով զորս բժիշկներն ալ չէին դիտեր :

Ճարահատած , Սիրանոյշ , արցունքները հրելով աչքերուն խորը , հաւահմայից կուլ տալով , ելաւ այդ հաւահմային գնաց : Խոշոր կին մըն էր վաթսուն տարու , բազմոցի մը անկիւնը հանգստաւետօրէն նստած , ձեռքը համրիչ մը զոր շարունակ կը դարձունէր : Մայրական գորովալի շեշտով մը ընդունեց մանկամարդ յաճախորդուհին , որուն կերպարանքը զննած էր վալլակէ աւելի արագ նայուածքով մը , ներս մտած պահուն :

—Էկու նայիմ, ախճիկս, տէ՞րտդ ինչ է:

Հեծիւն մը ելաւ հէգ Սիրանոյշին կողորդը, այտերը շառագունեցան, աչուրները լեցունեցան:

—Ըսէ, ախճիկս, ըսէ քի տէրտիդ տէրման մը ընեմ:

Անկեղծ ու սիրալիր այդ ձայնը յուզեց Սիրանոյշի սիրտը որ դուրս տուաւ իր բոլոր դառնութիւնն ու բոլոր վիշտը, լալով պատմեց իր առաջին սէրն ու հաքի դժբախտութիւնն, և աղաչեց պաշտօնեցաւ հաւահմայ կնոջ որ դեղ մը, դարման մը ընէ որով ամուսինը նորէն իր առջի սիրոյն դառնայ, նորէն իր ընտանի յարկին մէջ փնտռէ ամեն հաճոյք ու ամեն վայելք: Կինը՝ դգածեալ ձայնով ըսաւ Սիրանոյշին.

—Ձաւակս, հի՛շ հոգդ մընէր, քէշկէ ամենուն ալ տէրտը ատ ըլլար. ամիս մը չքած՝ էրիկդ վրագ խենդ պիտի ըլլայ:

Յետոյ, անմիջապէս դէմքին արտայայտութիւնը փոխուեցաւ. աչուրները կիսովին գոցուեցան, շուրթերը սկսան երերակալ՝ փարտուք մը հանելով, ու ձեռքին մատներն սկսան տենդօրէն դարձունել համրիչին սև հատիկները:

Քառորդ մը տեւեց այս:

—Ախճիկս, ըսաւ վերջապէս երբ այդ մունջ արարողութիւնը վերջացաւ, հիմակ քեզի բան մը պիտի ըսեմ, տեղն ի տեղօքը պիտի ընես, աղէկ մտիկ ըրէ. քիչ մը զօռ է ամա, ի՛նչ ընենք, զաւակս, անքի աս տէրէճէներուն հասեր էս նէ, ամեն պանի խաղանմիչ պիտի ըլլաս. մինակ ետ Պէյօղլուի, ետ Ղալաթիաի պալլըն բաղարները կը կտնուի լէ՛ւէկ պալլընի. վախտը անցած է, կտնուելուն ալ շատ շիւտէն ունիմ, ամա մէյ մը նայէ. բէք սուղ ծախելու համար պաղը պալլընի կը պահէ: Ինչ ընես չընես պիտի կտնաս ատ ծուկը. կտա՞ր մի, կ'առնես ինծի կուգաս. փուշը կը հանենք մէջէն, էս պան մը կը կարգամ վրան, հաքէն տուն խառուովի կ'ընես, կը ծեծես, թող կընես, իրիկունը էրիկդ կայ նէ՝ կերած կերակուրին, իմած խալովին մէջ մէյմէկ քիչ կը ցանես. կուզես նէ ետխախին մէ-

ջըն ալ կրնաս ցանել: Էյէր ամիս մը չը քած՝ էրիկդ բերիբաք չըլլայ նէ՝ թող ինծի Ֆալճի Մարեամ չըսես: Հատէ կընա տէ ըսածս ըրէ, ախճիկս, ամա մութլախա ընելու է, հէ՛մ տուն պիտի ընես. պաշխա սին չպիտի իմանայ:

Դուրս ելաւ Սիրանոյշ գլխիկոր բայց մասամբ անտիկուած: Միտքը դրաւ այն իրիկունն իսկ, մութ առնէ, ամեն վանդ աչք առնելով, յիշեալ ծուկը փնտռելու ելլել և ի՛նչ գին ալ ուզուի՝ տալ:

Բերայի փողոցներուն մէջ լապտերներն արդէն վառուած էին. բարակ անձրեւ մը կը թփթփար. կապերուն ու անցորդներուն երթեկը ցանցաւցած էր: Կին մը՝ գլուխը սև շալի մը մէջ փաթթած, մտաւ այն փողոցն ուր հայ ձկնավաճառներ սփռած են իրենց տեսակ տեսակ ձուկերը, որոց յատկութիւնները կը ծանուցանեն մեծադղորդ գոչիւններով: Կինը՝ երկչոտ քայլերով մօտեցաւ առաջին ձկնավաճառին ու կամայ մը հարցուց թէ նէվրէկ ունէ՞ր: Մարդը կնկանը երեսը նայեցաւ դարմացումով, գլուխը քերեց և ըսաւ.

—Ի՛նչ կ'ըսես, քուրիկս, աս վախիդ լէվրէ՛կ, նէ՛ կեղէր. իմ քովս չիկայ, պաշխասիրն հարցուր:

Սիրանոյշ, —ինքն էր, — թեթեւ հառաչ մը արձակեց և հեռացաւ. քիչ մը վար ուրիշ ձկնորսի մը դիմեց ու նոյն հարցումն ըրաւ:

—Իմ քովս չի կայ, քուրիկս, ամա, ինծի կուգայ քի Համբիկը ունենալու է. ան շունչանորդիին քովը ամեն պան կայ. ինծի նայէ, սա վարը-սօլ թարաֆի խանութը կը տեսնա՞ս կոր. ներս մտիւր, Համբիկ հարցուր, պէլքի ան ունի:

Մանկամարդ կինը ցուցուած խանութըն ուղղուեցաւ և ներս մտաւ դուռնէն: Բարձրահասակ մարդ մը կեցած էր ի շէշլաներուն մէջ ձուկերը շարելու զբաղած. տաքի շուկ մը լսելով ետին դարձաւ Կինը ներս մտած ու քովը կեցած էր:

—Համբիկը դո՞ւն ես, հարցուց:

Այս ձայնը լսելուն պէս՝ ձկնորսը ասդին դարձուց զլուխը՝ ամբողջ մարմնովը դողդալով:

—Էս էմ, ըսաւ :

—Լէվրէկ պալըթի կը գտնուի՞ քովդ , ինչ որ ուզես կուտամ :

Ձկնորսը քայլ մը ետեւ դացած էր և պլավացող կանթեղին լոյսովը դէմքը կը դիտէր այդ յաճախորդուհիին : Դառն և աղետալի ժպիտ մը սահեցաւ ձկնորսին շուրթերէն :

—Կը կտնուի , պատասխանեց յամբ ձայնով :

Եւ ծռելով, թակոյկի մը մէջէ ձուկ մը դուրս հանեց, շփէլաւ մը վրայ դրաւ և մատովը ցուցունելով.

— Իշտէ՛, ըսաւ .

— Ի՞նչ տալու եմ :

— Հի՛մա կ'ըսեմ :

Ձկնորսը բացաւ չապիկին կուրծքը , ձեռքը ներս խոթեց, և կարծ խուզարկութենէ մը ետք՝ թուղթի կտոր մը դուրս հանեց, ձուկին կռնակին վրայ բացաւ զայն և Սիրանոյշին դառնալով՝

— Սըվիկա կիտե՞ս ինչ է , հարցուց :

Մանկամարդ կինը ծռեցաւ և ծաղկենը կար թուղթի մը վրայ, որ սակայն ժամանակ անցնելով դեղնած էր, կարդաց .

Պաշտելէ Աբաժա ,

Ետ քաջուեցաւ ափերերան եղած, ձրկնորսին երեսը նայեցաւ սոսկումով և ակռաներուն մէջէն մրմնջեց .

— Համբիկ...

— Զիտէդ պաշիկ մը, պատասխանեց ձկնորսը ձեռքը ձուկին վրայ դնելով և Սիրանոյշին նայելով :

Անոնց աչուրները պահ մը իրարու մէջ մխուեցան, իրարու շատ բաներ ըսին անոնք անձայն , մո՛ւնջ :

Յետոյ , շա՛ն հանեց Սիրանոյշ , գըլուխը դէպ առաջ խոնարհեց՝ մորթուող ոչխարի մը համակամութեամբ, վեր առաւ ծոծրակին մազերը և ձկնորսին մօտենալով ըսաւ .

— Պա՛գ :

Համբիկ պահ մը դիտեց իր առջեւ խոնարհող այդ դժբաղդ արարածը , աչուրներուն մէջ թացութիւն մը երեցաւ , փոխանակ ծռելու քայլ մը ետ դնաց և ձայնով մը , ուր խորին տխրութեան երանգ մը կար , ըսաւ .

— Չո՛ւղեր , առ ծուկը կընա՛ :

ԵՐՈՒԱՆԴ

ԶԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ս. Պատրիարք հայրը կիրակի օրը կայս. պալատ դնաց Պայրամի տօնը շնորհաւորելու և ընդունուեցաւ առաջին սենեկապետ Վսեմ. հաճի Ալի Պէյի կողմէ : Ս. Պատրիարքը շնորհաւորելով պայրամի տօնը , բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Սուլթանին կենացը համար : Հաճի Ալի Պէյ Վեհ. Սուլթանին մատուց Ն. Ամենապատուութեան շնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները , և դառնալով Ս. Պատրիարքին հաղորդեց Վեհ. Սուլթանի բարձր գոհունակութիւնն ու կայսերական բարեւերը : Ս. Պատրիարք հայրը այցելեց նաեւ բոլոր նախարարներուն :

— Ըստ տրամադրութեան Իզմիրեանց կտակին , հինգշաբթի օրը տեղի ունեցաւ ի Ղալաթիա , Սահակ Մեսրոպեան մրցանակաբաշխութեան հանդէսը : Արժ. Տ. ՅովհաննէսԱ. քահանայ Հիւնքեարպէյէնտեան իր Սրոբաբանակն Բաւաթըրին համար ստացաւ առաջին մրցանակը՝ վաթսուն ոսկի , և Աբրահամ Էֆ. Այվազեան իր Ծառ Հայ Կենսագրութեանց դործին համար երկրորդ մրցանակը՝ քսանը հինգ ոսկի , նախորդ տարեշրջանէն մնացած :

— Ուրախութեան անկեղծ շնորհով կը ծանուցանենք թէ Վսեմ. Պօղոս Էֆէնտի Պառնառեան , թարգմանիչ կայս. Պալատան և գլխաւոր պաշտօնատար տոպագրական տեսչութեան , արժանացած է կայսերական նոր շնորհի մը , ստանալով երրորդ կարգի Օսմանիէ պատուանշան :

Ն Ե Ր Ք Ի Ն

Անցեալ ուրբաթ իրիկուն ժամը 8 ու կէսին սկսաւ Գուրպան Պայրամի տօնը : Ծաբաթ առտու կանուխ կատարուեցաւ պայրամի հանդէսը : Վեհ. Սուլթանը փառաւոր կառքի մը մէջ բաղմած՝ Պէշիքթաշի Սինան փաշա մզկիթը դնաց , ուր առաւօտեան ազօթքը կատարելէն ետք՝

Տորմա-Պաղչէի պալատը գնաց մեծ հանդէսով: Շնորհաւորական արարողութիւնները կատարուելէն ետք, Վեհ. Սուլթանը կայս. պալատ վերադարձաւ:

—Ղալաթիոյ մարտատան տնօրէն անուանեցաւ սակացոյցերու դիւանին տնօրէն Ալի Րիզա Պէյ, պահելով հանդերձ իր սոյն պաշտօնը:

—Պրուսիոյ մէջ շերամաբուծական վարժարանին համար նոր շէնք մը սկսած է կառուցուիլ:


—Ռուսական դեսպան Պ. Նելիսոֆ, որ Քուլէի պահականաւով պտոյտ մը ընկու գացած էր Միջերկրականի մէջ, երկուշաբթի օրը մայրաքաղաքս դարձաւ:

—Բ. Գրան հասած հեռագիր մը կը հաղորդէ թէ Գոլումպեան ցուցահանդէսին Օամ. բաժինը հանդիսաւորապէս բացուեր է յունիս 13/25ին:

—Ռուսիոյ Պետական Խորհուրդի անդամներէն Պ. Ալէքսանդրովիչ, որ քանի մը օր առաջ մայրաքաղաքս եկած էր, չորեքշաբթի օրը երուսաղէմ ուղեւորեցաւ:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Մովսիս անուելի արկած մը պատահեցաւ անցեալ ուրբաթ իրիկուն, Սուրիական Տրիպոլսոյ մօտ: Միջերկրականի անգլ. նաւատորմին գլխաւոր զրահաւորը Վէյլըն, ուր կը գտնուէր նաւատորմին գերագոյն հրամանատար Սըր Ճորձ Թրայըն, ընկզմեցաւ, բախելով նոյն նաւատորմին Բէյքըրասաձ զրահաւորին: Ընկըղմեցան 22 սպայք և 235 նաւապ. ընդ որս սըր Ճորձ Թրայըն և սպայական 29 սպայք և 287 նաւապ.



—Գերման իւրաքանչեւ հասարակութի կառավարութիւնը ի համապատասխան շահած է նոր մեքենայի քանակութիւններուն մէջ ի նպաստ գրեւորական օրէնքին որ կը կարծուի թէ 210 երեսփոխաններէ պիտի քուէարկ ւի: Վիէնէլ կայսրինք անձամբ պիտի բանայ Ռայխսթակը:

—Յունիս 14ին Մեքքէի մէջ 999 անձինք մեռեր են հետախուսէ:

—Ֆրանս (Յառաջ) հետաքրքրաշարժ նա-

ւը, որով Նորվեգիացի Պ. Նանզէն Հիւսիսային Բեւեռ կ'ուզէ երթալ անցեալ շաբթու ճամբայ ելաւ Քրիստիանեայէ: Բայց անոնք որ այսպիսի ճամբորդութիւններ ըրած են, որք քաջ տեղեակ են հիւսիսային բեւեռի հանգամանքներուն, չեն յուսար որ Պ. Նանզէնի ձեռնարկն յաջողութեամբ պսակուի:

—Թուրքի, Մոնթէնէրէ, Մարսիլիոյ մէջ հետախուսը թեթեւօրէն կը ճարակի:

—Սառա Պէրնարի զլիսուն եկած ձիւնը... ամառուան այս տաքուն: Վալբարէզոյի մէջ (Հարաւային Ամերիկա), ուր կը գտնուէր կարգ մը ներկայացումներ տալու, դոյցուցեր է իր բոլոր գոհարեղէնները, 300 հազար ֆրանքի արժողութեամբ:

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Աղբիւնուպոլիս	ՄԱԳՈՒՏ	ԷՖ. ՍԱՆՏԱԼՃԵԱՆ
Զմիւռնիա	ԿԱՐԱՊԵՏ	ՄԱԼԷՃԱՆԵԱՆ
Խարբերդ	ՌՈՒՐԷՆ	ԶԱՐԱՐԵԱՆ
Կիրասոն	ՅԱՐՈՒԹԻՆ	ՄՈՒԹԱՅԵԱՆ
Մալկարա	ԱՐՏԱՇԷՍ	ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
Նիկոմիդիա	ՄԻՀՐԱՆ	ԱԹԱՆԱՍԵԱՆ
Ռօտոսթօ	ՏՕԲԹՈՒ	ՆԷՎՐՈՒՉԵԱՆ
Տրապիզօն	ՅԱԿՈՒ	ՇԱՒԱՐՇ

Մ Ա Կ Ա Ր Ա Ն

18 Յունիս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

Երեք ամիս Լոնտոնի վրայ	10
» » Բարիզի »	22 90

Քօնստնուլէ	23 3
Թանգիլաթը Օսմանիէ	—

ԸՆԹԱՅՔ ԱՐՎԷՐՎՐՈՅ

Փոխառ. Մէռի A 55 30 B 33	— C 22 87
--------------------------	-----------

ԲԱՎՆԷՏՈՒՄ

Երկաթուղի 88	Թրամուէյ 560	Ռէժի 16 16
--------------	--------------	------------

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՅ

Օամ. Ոսկի	100	Անգլ. Ոսկի	110 04
Մէճիս	107 38	Իմպերիալ	90 13
Մանր. արծաթ	103	Գրիմից	51 16
Մէթալիք	98	Բուպի թուղթ	8 70
20 ֆր. նոյն	8 32	Թասֆիյէ	—

ԱՐՏՈՆԱՏԷՐ Ա. Ս. ԻՌԻՒՂԵԱՆ

Ի Տպարանի ԱՐԵՒԵԼԻ Է Լ ՄԱՍԻՍ Լրագրաց